# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 սեպտեմբերի 2024թ. թիվ 616-Ա

## Գ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ 293-Ա և 2024 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 614-Ա որոշումները, հաշվի առնելով Գ.Սիմոնյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Գայանե Շահենի Սիմոնյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Գ.Սիմոնյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 4-ից:

Recoverable Signature

X
Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081
2024-09-04 10:40:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 4
ք.Վանաձոր